



Արարատի մարզ, Արարատ, Շահումյան փող., 34 շենք
Էլ. հասցե: infoararat@aarhus.am, vigenchilingaryan@gmail.com
Հեռ. 099 00 85 89

N AA - 006

Ի լրումն AA-002 գրության

« 28 » հունիս 2014թ

ՀՀ բնապահպանության նախարար
Արամայիս Գրիգորյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Արարատի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն.

1. 2010-2014 թվականներին Արարատի մարզի խորքային ջրային հորերի վերաբերյալ, Բնապահպանության նախարարության պետական տեսչության կողմից ստուգումների տվյալները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն:

Արարատի Օրհուս կենտրոնի համակարգող՝

Վ. Չիլինգարյան